ՄԻԱՍՆԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆ

2022

ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

ԹԵՍՏ 1

Խմբի համարը

Նստարանի համարը

Հարգելի ° դիմորդ

Խորհուրդ ենք տալիս առաջադրանքները կատարել ըստ հերթականության: Ուշադիր կարդացե՛ք յուրաքանչյուր առաջադրանք և պատասխանների առաջարկվող տարբերակները: Եթե Ձեզ չի հաջողվում որևէ առաջադրանքի անմիջապես պատասխանել, ժամանակը խնայելու նպատակով կարող եք այն բաց թողնել և դրան անդրադառնալ ավելի ուշ:

Ձեր առջև դրված թեստ-գրքույկի էջերի դատարկ մասերը ազատորեն կարող եք օգտագործել սևագրության համար: Թեստ-գրքույկը չի ստուգվում: Ստուգվում է միայն պատասխանների ձևաթուղթը:

Առաջադրանքները կատարելուց հետո չմոռանաք պատասխանները ուշադիր և խնամքով նշել պատասխանների ձևաթղթում: Պատասխանների ձևաթղթի ճիշտ լրացումից է կախված Ձեր քննական միավորը:

Մաղթում ենք հաջողություն:

Ա ՄԱԿԱՐԴԱԿ

1 Ե՞րբ է ծնվել Հովսեփ Էմինը.

1) 1726 թ.
2) 1731 թ.
3) 1716 թ.
4) 1722 թ.

2 Ե՞րբ է գահակալել Տիգրան II-ը.

1) Ք. ա. 115-95 թթ.
2) Ք. ա. 55-34 թթ.
3) Ք. ա. 160-115 թթ.
4) Ք. ա. 95-55 թթ.

3 Ե՞րբ է գումարվել առաջին տիեզերական ժողովը Նիկեայում.

1) 313 թ.
2) 335 թ.
3) 354 թ.
4) 325 թ.

4 Պետական լեզվի մասին օրենքն ընդունվել է՝

1) 1920 թ. մայիսի 28-ին
2) 1919 թ. դեկտեմբերի 26-ին
3) 1919 թ. մայիսի 30-ին
4) 1920 թ. հունիսի 23-ին

5 Ե՞րբ է հիմնադրվել Ներսիսյան դպրոցը.

1) 1810 թ.
2) 1815 թ.
3) 1824 թ.
4) 1837 թ.

6 Ե՞րբ կառուցվել Արտաշատ մայրաքաղաքը.

1) Ք. ա. մոտ 185 թ.
2) Ք. ա. մոտ 175 թ.
3) Ք. ա. մոտ 165 թ.
4) Ք. ա. մոտ 160 թ.

7 Համազանգեզուրյան երկրորդ համագումարը հրավիրվել է՝

1) 1920 թ. դեկտեմբերի 25-ին
2) 1921 թ. փետրվարի 25-ին
3) 1921 թ. ապրիլի 27-ին
4) 1918 թ. հունիսի 1-ին

8 Ե՞րբ է վախճանվել Սահակ Պարթևը.

1) 440 թ. սեպտեմբերի 7-ին
2) 440 թ. փետրվարի 17-ին
3) 439 թ. սեպտեմբերի 7-ին
4) 439 թ. փետրվարի 17-ին

9 Որքա՞ն է Արաքս գետի երկարությունը.

1) մոտ 354 կմ
2) մոտ 500 կմ
3) մոտ 400 կմ
4) մոտ 1000 կմ

10 Ո՞ր գավառում էր գտնվում Նվարսակի գյուղը.

1) Զարևանդ
2) Հեր
3) Արտազ
4) Բասեն

11 Որտե՞ղ է հրատարակվել «Հնչակ» թերթը.

1) Փարիզում
2) Ժնևում
3) Մարսելում
4) Վանում

12 Արցախի ո՞ր գյուղն ազատագրվեց 1992 թ. հունվարի 26-ին.

1) Կրկժանը
2) Խոջալուն
3) Քարինտակը
4) Մարզիլուն

13 Ի՞նչ տարածք միավորեց Պարույրն իր իշխանության ներքո .

1) Վանա լճից մինչև Արաքս ընկած ողջ տարածքը
2) Ուրմիա լճից մինչև Եփրատ ընկած ողջ տարածքը
3) Ուրմիա լճից մինչև Տիգրիս ընկած ողջ տարածքը
4) Վանա լճից մինչև Եփրատ ընկած ողջ տարածքը

14 1991 թ. դեկտեմբերին ո՞ր պետությունը ճանաչեց, սակայն դիվանագիտական կապեր չհաստատեց ՀՀ-ի հետ.

1) Ադրբեջանը
2) Թուրքիան
3) Իրանը
4) Կանադան

15 Ո՞րտեղ է 1917 թ. ստորագրվել ռուս-թուրքական զինադադարի համաձայնագիր.

1) Երզնկայում
2) Տրապիզոնում
3) Բաթումում
4) Թիֆլիսում

16 Ո՞վ է հաջորդել Պապ թագավորին.

1) Արշակ III-ը
2) Վաղարշակը
3) Վարազդատը
4) Վռամշապուհը

17 Ո՞ր արքայի մասին է հույն պատմագիր Պոլիբիոսի ստորև բերվող արտահայտությունը.

«Արմինիայի մեծագույն մասի տիրակալ»:

1) Պարույրի
2) Տիգրան Երվանդյանի
3) Տիգրան II-ի
4) Արտաշես I-ի

18 Հայոց ո՞ր կաթողիկոսն է ասել հետևյալ խոսքերը.
«Քավ լիցի՝ իմ մոլորված ոչխարը մատնեմ գայլերին»:

1) Ներսես Ա Պարթևը
2) Սուրմակը
3) Սահակ Ա Պարթևը
4) Հովսեփ Ա Վայոցձորցին

19 Ի՞նչ է նշանակում «Անաբասիս».

1) «Քսան հազարի նահանջը»
2) «Տասը հազարի նահանջը»
3) «Հույն վարձկանների նահանջը»
4) «Մեծ մարդկանց մասին»

20 Անդրկովկասում 1917 թ. նոյեմբերի 15-ին կազմավորված գործադիր նոր մարմինը կոչվում էր՝

1) ԱՀԿ
2) Անդրկովկասյան կոմիսարիատ
3) Ժամանակավոր կառավարություն
4) ԺԿԽ

21 Ի՞նչ կարևոր հետևանք ունեցավ Դվինի II ժողովի գումարումը.

1) Հայ առաքելական եկեղեցին վերջնականապես ազատվեց կաթոլիկ եկեղեցու հոգևոր ենթակայությունից:
2) Վերջնականապես հաստատվեց Հայ առաքելական եկեղեցու ազգային ինքնուրույնությունը:
3) Հայ առաքելական եկեղեցին դարձավ ուղղափառ եկեղեցու առաջնորդը:
4) Հայ առաքելական եկեղեցին համաձայնեց ընդունել Քաղկեդոնի:

22 1828 թ. Թուրքմենչայի պայմանագրով՝

1) Ռուսաստանին անցան Կարսի, Կաղզվանի, Օլթիի, Արդահանի, Ալաշկերտի, Բայազետի գավառները, Սև ծովի առափնյա շրջանները՝ Բաթում նավահանգստով:
2) Արևմտյան Հայաստանի մեծ մասը, այդ թվում Էրզրումն ու Բասենը, մնաց Օսմանյան կայսրությանը:
3) Արևելյան Հայաստանի ևս մի մեծ հատված՝ Երևանի ու Նախիջևանի խանությունները, անցավ Ռուսաստանին, սակայն Արաքսից հարավ ընկած պատմական Պարսկահայքի ու Ատրպատականի գավառները վերադարձվեցին պարսիկներին:
4) Ռուսաստանին անցավ Արևելյան Հայաստանի մի հատվածը՝ Լոռին, Փամբակը, Շամշադինը, Գանձակը, Ղարաբաղը, Շիրակը:

23 Վանի թագավորության արքաների անունները դասավորել ըստ նրանց գահակալման հաջորդականության.

ա. Արգիշտի I
բ. Սարդուրի II
գ. Ռուսա II
դ. Մենուա
ե. Ռուսա I
զ. Սարդուրի I

1) դ, զ, ա, ե, բ, գ
2) դ, զ, բ, ա, ե, գ
3) զ, ա, դ, բ, գ, ե
4) զ, դ, ա, բ, ե, գ

24 Դասավորել ըստ ժամանակագրական հաջորդականության.

ա. Անիի հռչակումը մայրաքաղաք
բ. Տուղրիլի արշավանքը Հայաստան
գ. Ծումբի ճակատամարտը
դ. մոնղոլների արշավանքը Հայաստան
ե. Բուղայի արշավանքը Հայաստան

1) ա, դ, ե, գ, բ
2) գ, ե, ա, բ, դ
3) ե, դ, ա, գ, բ
4) ե, ա, գ, բ, դ

25 Տարեթվերը համապատասխանեցնել իրադարձություններին.

1) Լոնդոնի կոնֆերանսը	ա. 1906 թ.
2) Հայկական բարեգործական ընդհանուր միության (ՀԲԸՄ) հիմնադրումը	բ. 1945 թ.
3) Լոզանի կոնֆերանսի բացումը	գ. 1923 թ.
4) ԱՄՆ պետքարտուղարի տեղակալին հայկական հողային պահանջների վերաբերյալ հուշագիր ներկայացնելը	դ. 1922 թ.
5) Խորհրդային Հայաստան սփյուռքահայության ներգաղթի մասին ԽՍՀՄ կառավարության որոշումը և արտասահմանից ներգաղթող հայերի ընդունման կոմիտեի ստեղծումը	ե. 1947 թ.
	զ. 1921 թ.

1) 1–զ, 2–ա, 3–գ, 4–ե, 5–դ
2) 1–դ, 2–գ, 3–ա, 4–ե, 5–բ
3) 1–ե, 2–ա, 3–գ, 4–բ, 5–դ
4) 1–զ, 2–ա, 3–դ, 4–ե, 5–բ

26 Նշանավոր ազգային-քաղաքական գործիչների և հայդուկների անուն-ազգանունները համապատասխանեցնել մականուններին.

1) Հովսեփ Արղության	ա. Իշխան
2) Համբարձում Պոյաճյան	բ. Քեռի
3) Ստեփան Զորյան	գ. Մեծն Մուրադ
4) Սարգիս Մեհրաբյան	դ. Վարդան
	ե. Ռոստոմ

1) 1–ա, 2–դ, 3–գ, 4–բ
2) 1–ա, 2–գ, 3–ե, 4–դ
3) 1–ա, 2–դ, 3–բ, 4–գ
4) 1–ե, 2–ա, 3–բ, 4–գ

27 Ընտրել այն շարքը, որը կազմված է բացառապես Վանա լճի կղզիներից.

1) Լիմ, Կտուց, Արճակ, Նազիկ
2) Լիմ, Կտուց, Արտեր, Աղթամար
3) Արտեր, Աղթամար, Բերկրի, Նազիկ
4) Բերկրի, Նազիկ, Աղթամար, Կտուց

28 Ե՞րբ է տեղի ունեցել Մագնեսիայի ճակատամարտը.

1) Ք. ա. 220 թ.
2) Ք. ա. 188 թ.
3) Ք. ա. 230 թ
4) Ք. ա. 190 թ.

29 Ե՞րբ է տեղի ունեցել Ղարաքիլիսայի հերոսամարտը.

1) 1918 թ. մայիսի 22-28-ը
2) 1918 թ. մայիսի 23-29-ը
3) 1918 թ. մայիսի 16-27-ը
4) 1918 թ. մայիսի 25-30-ը

30 Առաջին հանրապետությունում քանի՞ կուսակցություն էր գործում.

1) 3
2) 5
3) 8
4) 9

31 Կիլիկյան ո՞ր արքան է հայտնի որպես Մեծագործ.

1) Լևոն II-ը
2) Հեթում II-ը
3) Հեթում I-ը
4) Լևոն III-ը

32 Ո՞ր աշխատությունում են զետեղված հետևյալ խոսքերը.

«Խիզախությա՛մբ եղեք, եղե՛ք նմանվողներ մեր նախահոր՝ քաջ Արամի որդիներին, որ միգուցե թե այդպիսով կարողանանք վերագտնել մեր հայրենիքն Արարատյան»:

1) «Որոգայթ փառաց»-ում
2) «Նոր տետրակ»-ում
3) Մ. Խորենացու «Հայոց պատմություն»-ում
4) «Հովսեփ Էմինի կյանքը և արկածները» գործում

33 Ո՞վ է մեջբերված խոսքի հեղինակը.

«Մենք չենք կարող երբևիցե հրաժարվել հողային պահանջներից, որոնք մեզ համար անհրաժեշտություն են, մեր կենսունակության և ապրելու կարելիության առաջին պայմանը»:

1) Ա. Մյասնիկյանը
2) Գ. Նժդեհը
3) Ա. Մանուկյանը
4) Ա. Մռավյանը

34 Ինչպե՞ս էր կոչվում արքունի եկամուտներն ու ծախսերը տնօրինող պաշտոնյան Կիլիկյան Հայաստանում.

1) պայլ
2) ասպետ
3) մարաջախտ
4) սենեսկալ

35 Թվարկվածներից որո՞նք են ճիշտ արտահայտում պատմական իրադարձությունների պատճառները.

ա. Ս. Կիրովի սպանությունը պատճառ հանդիսացավ տրոցկիստների ազատ գործունեության համար:
բ. 1949 թ. Հայաստանից բոլոր սփյուռքահայերի՝ Ալթայի երկրամաս արտաքսվելու իրական պատճառը նրանց անդամակցությունն էր «Դաշնակցություն» կուսակցությանը:
գ. 1925 թ. խորհրդա-թուրքական պայմանագրի դենոնսացիան պայմանավորված էր Երկրորդ աշխարհամարտում Թուրքիայի՝ Գերմանիային փաստացի դաշնակցելով:
դ. Ա. Խանփերյանցի ձերբակալման պատճառը դավաճանությունն էր հայրենիքին:
ե. Սառը պատերազմը պատճառ հանդիսացավ, որ ԽՍՀՄ ղեկավարությունը հրաժարվի Թուրքիայից հայկական հողերի պահանջներից:

1) ա, գ
2) բ, դ
3) գ, ե
4) ա, ե

36 Իրադարձություններից որո՞նք են խախտում տրված շարքի ժամանակագրական հաջորդականությունը.

ա) Մ. Փորթուգալյանի հաստատվելը Մարսելում
բ) Ս. Առաքելոց վանքի կռիվը
գ) Գում Գափուի ցույցը
դ) Բշարե Խալիլի սպանությունը
ե) Բաբը Ալիի ցույցը
զ) Բաբշենի կռիվը

1) ա, դ
2) բ, դ
3) գ, ե
4) գ, զ

37 Դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ.

ա. խորհրդային զորքերի մուտքը Կապան
բ. Լեռնահայաստանի վերանվանումը Հայաստանի Հանրապետություն
գ. խորհրդային զորքերի մուտքը Գորիս
դ. Ինքնավար Սյունիքի ստեղծումը
ե. խորհրդային զորքերի մուտքը Սիսիան
զ. Ինքնավար Սյունիքի հռչակումը «Լեռնահայաստան»

1) զ, բ, ե, դ, ա, գ
2) զ, դ, ա, բ, ե, գ
3) դ, բ, զ, գ, ե, ա
4) դ, զ, բ, ե, գ, ա

38 Զաքարյան Հայաստանի իշխանությունների կենտրոնները համապատասխանեցնել իշխանությունների անվանումներին.

1) Զաքարյանների իշխանապետություն	ա. Ամբերդ
2) Զավախքի իշխանություն	բ. Լոռե
3) Վահրամյանների իշխանություն	գ. Անի
4) Վաչուտյանների իշխանություն	դ. Թմուկ (Թմկա) բերդ
	ե. Գագ

1) 1–գ, 2–դ, 3–ե, 4–ա
2) 1–գ, 2–դ, 3–ա, 4–ե
3) 1–դ, 2–բ, 3–ե, 4–ա
4) 1–գ, 2–դ, 3–բ, 4–ա

39 Ռուսա I-ի օրոք իրականացված բարեփոխումների շնորհիվ բանակում ստեղծված նոր կազմավորումները կոչվում էին՝

1) հետևազոր
2) արքայական գունդ
3) աշխարհազոր
4) մարզային զորքեր
5) մաղխազական այրուձի

40 Թվարկածներից որո՞նք են Սյունիքի ազատագրական պայքարի պարտության պատճառները.

1) սյունեցիների ազատասիրական ոգու անկումը
2) հայկական զորքերի միայնակ մնալը թշնամու գերակշիռ ուժերի դեմ
3) Մխիթար սպարապետի՝ թշնամու հետ բանակցելու մտքին հակվելը
4) հայկական զորքերի հրամանատարության մեջ տեղի ունեցած պառակտումը
5) Եսայի Հասան-Ջալալյանի մահը

41 Տրված պնդումներից որո՞նք են ճիշտ.

1) Անգլիայի վարչապետ Դ. Լլոյդ Ջորջը համաձայնվեց ստանձնելու հայ–թուրքական սահմանները որոշելու իրավարարի առաքելությունը:
2) Սան Ռեմոյի կոնֆերանսը հավանություն տվեց միացյալ հայկական պետության ստեղծմանը, սակայն դաշնակիցները շարունակում էին հարցը կապել Ռուսաստանի կողմից Հայաստանի մանդատը ստանձնելու խնդրի հետ:
3) Հաճընի 1920 թ. ինքնապաշտպանության բարձրագույն խորհրդի նախագահն էր Պետրոս Սարաճյանը, զինված ուժերի հրամանատարը՝ Սարգիս Ճեպեճյանը:
4) Միացյալ Հայաստանի հռչակագիրը վճռական քայլ էր հայության երկու հատվածների մերձեցման համար, բայց այն արտաքին–քաղաքական որևէ նշանակություն չունեցավ:
5) ԱՄՆ–ի Սենատը մերժեց Հայաստանի մանդատը ստանձնելու և այնտեղ ամերիկյան զորքեր ուղարկելու նախագահ Ռուզվելտի առաջարկը:
6) Կիլիկիայի հայերի կոտորածների պատասխանատվությունը դնելով Մ. Քեմալի և Կ. Պոլսի օսմանյան կառավարության վրա՝ դաշնակիցները գործնական որևէ քայլ չարեցին դրանք դադարեցնելու համար:

42 Տրված իրադարձություններից ո՞րն է խախտում տրված շարքի ժամանակագրական հաջորդականությունը.

1) Հելլենիզմի դարաշրջանի սկիզբն Առաջավոր Ասիայում
2) Սելևկյան պետության առաջացումը
3) Հայկազունների Երվանդական ճյուղի իշխանության վերացումը Մեծ Հայքում
4) Սամոսատ մայրաքաղաքի կառուցումը
5) Արշամաշատ քաղաքի կառուցումը

43 Իրադարձությունները դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ.

1) Արևելքի ժողովուրդների առաջին համագումարը Բաքվում
2) Արարայի ճակատամարտը
3) Սան Ռեմոյի կոնֆերանսը
4) Ֆրանսիական իշխանությունների կողմից Հայկական լեգեոնի լուծարումը
5) «Թուրքական ազգային ուխտի» ընդունումը քեմալական խորհրդարանի կողմից

44 Պատմական իրադարձությունները համապատասխանեցնել տարեթվերին.

Տարեթիվ

ա. 775 թ.

բ. 804 թ.

գ. 607-608 թթ.

դ. 618 թ.

ե. 725 թ.

ա	
բ	
գ	
դ	
ե	

Իրադարձություն

1) Ս. Հռիփսիմե եկեղեցու կառուցումը
2) Հերթ ոստիկանի կողմից «աշխարհագրի» անցկացումը
3) Արճեշի ճակատամարտը
4) Խաչափայտի վերադարձը Երուսաղեմ
5) Վրաց եկեղեցու անջատումը Հայոց եկեղեցուց
6) Աշոտ Բագրատունու (Մսակեր) ճանաչումը հայոց իշխան

45 Տրված 6 պնդումներից յուրաքանչյուրի համար ընտրել՝ «Ճիշտ է», «Սխալ է», «Չգիտեմ» պատասխաններից որևէ մեկը:

1) Աքեմենյան տերության դեմ Ալեքսանդր Մակեդոնացին իր արշավանքն սկսել է Ք. ա. 336 թվականին:
2) Մակեդոնացու ստեղծած տերության մայրաքաղաքը Պերսեպոլիսն էր:
3) Օգտվելով Ալեքսանդր Մակեդոնացուց Գավգամելայի ճակատամարտում Դարեհ III-ի կրած պարտությունից՝ հայերը վերականգնեցին իրենց անկախ պետականությունը:
4) Ծոփքի թագավոր հռչակվեց Գավգամելայի ճակատամարտի մասնակից Միթրաուստեսը:
5) Ալեքսանդր Մակեդոնացու հսկայածավալ պետությունը Ք. ա. 301 թ. բաժանվեց մի քանի մասերի, որոնցից ամենախոշորը Հայաստանին սահմանակից Պոնտոսի պետությունն էր:
6) Երվանդ III-ն այնքան հզոր էր, որ կարողացել էր ապաստան տալ սելևկյան տիրակալ Անտիոքոս III-ի դեմ ապստամբած նրա եղբորը:

Բ ՄԱԿԱՐԴԱԿ

46 Ընտրել տերմինների կամ հասկացությունների սխալ բացատրությունները.

ա. Գավգամելայի ճակատամարտի առնչությամբ Ք. ա. IV դ. Առաջին անգամ հիշատակվում են Մեծ և Փոքր Հայքերը՝ որպես միասնական վարչական միավորներ:

բ. Հայաստանի քրմապետը նաև համարվում էր Մեծ դատավոր:

գ. Հայաստանում Ք. ա. III դարից սկսված ժամանակաշրջանը հայտնի է «ուշ հելլենիստական» անունով:

դ. Արամազդը երկրի և երկնքի արարիչ, մարդկանց բարօրություն, լիություն ու արիություն շնորհող աստվածն էր:

ե. Վահագնը ռազմի, քաջության և ամպրոպի աստվածն էր:

զ. Հելլենիզմի դարաշրջանում հայոց մեծ տարածված կրոնը միաստվածային էր:

է. Զրադաշտականությունն իր բնույթով դուալիստական կրոն է:

1) բ, դ, ե
2) ա, գ, զ
3) բ, ե, զ
4) ա, գ, է

47 Թվարկված գործառույթներից առանձնացնել երեքը, որոնք Արշակունյաց Հայաստանում տնօրինում էր հազարապետը.

ա. արքունի կալվածքների հսկողություն

բ. պետական պարհակների տնօրինում

գ. պալատական արարողությունների կազմակերպում

դ. քաղաքների ամրությունների կառուցում, անտառատնկումների իրականացում

ե. արքունի գանձարանի հսկողություն

զ. ճանապարհների և կամուրջների կառուցում, ջրանցքների անցկացում

է. Արշակունյաց սեպուհների դաստիարակություն

1) գ, ե, է
2) ա, դ, զ
3) բ, դ, զ
4) բ, ե, զ

48 Թվարկվածներից որո՞նք են Մեծ եղեռնի հետևանքներ.

ա. Ոչնչացվեց Օսմանյան կայսրության հայ բնակչության մեծ մասը՝ 300 հազարը

բ. Մահմեդականացվեցին մոտ 250 հազար հայեր, հիմնականում՝ կանայք և երեխաներ:

գ. Հայերն ամբողջությամբ ոչնչացվեցին անգամ Կ. Պոլսում և Զմյուռնիայում:

դ. Հայերի ժառանգները մի կերպ փրկեցին իրենց ունեցվածքը:

ե. Ավերվեցին կամ կողոպտվեցին 2350 եկեղեցի և վանք, վերացվեցին 1500 դպրոց ու վարժարան:

զ. Հայությանը հասցվեց 20 մլրդ ֆրանկ ոսկու վնաս:

է. Տեղահանված հայերը բնակեցվեցին Կիլիկիայի հայաշատ շրջաններում:

1) բ, դ, է
2) ա, գ, ե
3) ե, զ, է
4) բ, ե, զ

49 Թվարկվածներից որո՞նք 1921 թ. Փետրվարյան ապստամբության արդյունքներից չեն.

ա. Խորհրդային իշխանությունը ստիպված էր առավել զգուշորոն գործել:

բ. Վճռական քայլեր ձեռնարկվեցին երկրի սոցիալ-տնտեսական դրությունը բարելավելու ուղղությամբ:

գ. Ապստամբության ղեկավարները ենթարկվեցին առավելագույն պատժի՝ գնդակահարության

դ. Ապստամբության բոլոր մասնակիցներին, ներառյալ ղեկավարներին, շնորհվեց համաներում:

ե. Հայկական բանակի աքսորված սպաներին ազատ արձակեցին:

զ. Հայկական բանակի աքսորից ազատված սպաներին թույլ չտրվեց վերադառնալ Հայաստան:

է. Ամրապնդվեց ռազմական կոմունիզմի քաղաքականությունը:

1) բ, դ, է
2) ա, դ, ե
3) ա, գ, զ
4) գ, զ, է

50 Հայկազուն-Երվանդունի տիրակալներից ո՞վ է գահակալել ութերորդը՝ ըստ ժամանակագրական հաջորդականության.

ա. Արշամ

բ. Երվանդ II

գ. Երվանդ IV

դ. Տիգրան Երվանդյան

ե. Շամ (Սամոս)

զ. Սկայորդի

է. Երվանդ III

ը. Վահագն

թ. Պարույր

ժ. Երվանդ Սակավակյաց

1) է
2) բ
3) ա
4) ե

51 Թվարկված եկեղեցիներից ո՞րն է կառուցվել վերջինը՝ ըստ ժամանակագրական հաջորդականության.

ա. Զվարթնոցի տաճար

բ. Ավանի եկեղեցի

գ. Մրենի եկեղեցի

դ. Ս. Հռիփսիմե եկեղեցի

ե. Անիի Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցի

զ. Վաղարշապատի Ս. Գայանե եկեղեցի

է. Թալինի եկեղեցի

ը. Ծիծեռնավանքի եռանավ բազիլիկ եկեղեցի

թ. Արուճի Ս. Գրիգոր եկեղեցի

ժ. Աղթամարի Ս. Խաչ եկեղեցի

1) ը
2) ե
3) է
4) ժ

52 1918 թ. տեղի ունեցած իրադարձությունների տրված շարքում ո՞րն է չորրորդը՝ ըստ ժամանակագրական հաջորդականության.

ա) Կարսի հանձնումը թուրքերին

բ) Ղարաքիլիսայի գրավումը թուրքերի կողմից

գ) Ներքին Թալինի բերդի գրավումը հայ կամավորների կողմից

դ) Սարդարապատի կայարանի հետգրավումը հայկական զորքի կողմից

ե) Բաշ Ապարանի ճակատամարտի ավարտը

զ) Ալեքսանդրապոլի գրավումը թուրքական զորքերի կողմից

է) Սարդարապատի գրավումը թուրքական զորքի կողմից

ը) Սարիղամիշի գրավումը թուրքական զորքերի կողմից

թ) Ղարաքիլիսայի ճակատի կազմակերպումը

1) դ
2) զ
3) ա
4) ե

53 Կատարել համապատասխանեցում.

1) Խոսրով III Կոտակ	ա) 338–350 թթ.
2) Պապ	բ) 333–341 թթ.
3) Վրթանես Ա Պարթև	գ) 330–338 թթ.
4) Շապուհ II	դ) 370–374 թթ.
5) Ներսես Ա կաթողիկոս	ե) 309–379 թթ.
6) Արշակ II	զ) 353–373 թթ.
7) Տիրան	է) 350–368 թթ.
	ը) 298–330 թթ.

1) 1–գ, 2–դ, 3–ե, 4–բ, 5–է, 6–զ, 7–ա
2) 1–է, 2–ա, 3–զ, 4–բ, 5–գ, 6–ը, 7–դ
3) 1–գ, 2–դ, 3–բ, 4–ե, 5–զ, 6–է, 7–ա
4) 1–գ, 2–բ, 3–ա, 4–ը, 5–դ, 6–զ, 7–ե

54 Ընտրել սխալ պնդումները.

ա. Ըստ Քսենոփոնի տեղեկության՝ Երվանդ II-ը ամուսնացած էր Աքեմենյան արքա Արտաքսերքսես II-ի դստեր հետ:

բ. Ք. ա. 522-521 թթ. ընթացքում բռնկված ապստամբության ժամանակ զորավար Վահումիսան Հյուսիսային Միջագետքում պարտություն կրեց հայերից:

գ. Դարեհ II-ը Աքեմենյան տերության տիրակալ դարձավ Ք. ա. 336 թ.:

դ. Աքեմենյան տերությունում վարչական միավորները կոչվում էին սատրապություններ:

ե. Մինչև Ք. ա. 331 թ. Հայաստանը Աքեմենյան տերության կազմում մնաց որպես սատրապություն:

զ. Դարեհ I-ի դեմ Բաղդադում բարձրացած ապստամբությունը գլխավորում էր Արախան՝ Խալդիտայի որդին:

է. Աքեմենյան արքա Արտաքսերքսես II-ի դեմ ապստամբել էր նրա եղբայր Կյուրոս Կրտսերը:

ը. Ք. ա. 331 թ. Հայաստանի անկախությունը վերականգնեցին Երվանդ (Օրոնտես) II-ը Մեծ Հայքում և Միթրաուստեսը Փոքր Հայքում:

1) ա, դ, ը
2) բ, ե, զ
3) գ, զ, ը
4) բ, գ, է

55 Ստորև բերված պնդումներից որո՞նք են ճիշտ.

ա. Երբ Սմբատ Բագրատունու 2000-անոց այրուձին գտնվում էր Արձնի գյուղի մոտ, արաբական 5000-անոց պատժիչ ջոկատը հասավ նրանց:

բ. Վարդանակերտի մոտ արաբները չկարողացան դիմադրել և սկսեցին խուճապահար անցնել Արածանին:

գ. Ռշտունիք գավառի Ակոռի գյուղի մոտ ապստամբները Վասպուրականի Սմբատ իշխանի գլխավորությամբ ջախջախեցին թշնամուն, միայն 280 արաբ զինվոր փախավ ու թաքնվեց եկեղեցում:

դ. Արաբների տիրապետության ժամանակ հայ հոգևորականությունը հարկատու չէր:

ե. Վարդանակերտի մոտ պարտված արաբները փախուստի դիմեցին, Երասխի սառույցը ջարդվեց, և նրանցից շատերը խեղդվեցին:

զ. VIII դ. Սկզբի հակաարաբական ապստամբությունն ընդգրկել էր Երևանը, Վանանդը, Վասպուրականը:

է. Հերթ ոստիկանի աշխարհագրով հարկահանությունը խիստ ծանրացավ:

1) բ, գ, դ
2) ա, ե, զ
3) ե, զ, է
4) բ, գ, է

56 Ո՞ր երեք նկարներն են պատկանում Գ. Բաշինջաղյանի վրձնին.

ա. «Զանգեզուր»
բ. «Սևանա լիճ»
գ. «Խրիմյան Հայրիկը Էջմիածնում»
դ. «Նոյը իջնում է Արարատից»
ե. «Դեպի Արագած տանող ճանապարհը»
զ. «Արարատ»
է. «Հայերի ջարդը Տրապիզոնում»

1) գ, ե, զ
2) ա, զ, է
3) բ, դ, է
4) ա, ե, զ

57 Կատարել համապատասխանեցում.

Տարեթիվ	Ներգաղթողների թվաքանակ
1) 1962–1982 թթ.	ա) 4000
2) 1947 թ.	բ) 10000
3) 1946 թ.	գ) 8000
4) 1921–1936 թթ.	դ) 42000
5) 1948 թ.	ե) 25000
6) 1950–ական թթ.	զ) 32000
	է) 51000

1) 1–դ, 2–բ, 3–է, 4–զ, 5–գ, 6–ա
2) 1–զ, 2–ե, 3–է, 4–դ, 5–բ, 6–ա
3) 1–ե, 2–բ, 3–զ, 4–ա, 5–է, 6–գ
4) 1–զ, 2–դ, 3–ե, 4–բ, 5–ա, 6–է

58 Ընտրել տերմինների կամ հասկացությունների սխալ բացատրությունները.

1) Պարսից արքայի և հռոմեական կայսեր միջև 363 թ. կնքված պայմանագիրն անվանել են «ամոթալի»:
2) Հայաստանի պարսկա-բյուզանդական բաժանումից հետո Տայք նահանգը հայտնի էր «Ներքին Հայք» անունով:
3) Հայաստանի պարսկա-բյուզանդական բաժանումից հետո Տուրուբերան նահանգը հայտնի էր «Մեծ Հայք» անունով:
4) Հայաստանի պարսկա-բյուզանդական բաժանումից հետո Բարձր Հայք նահանգը հայտնի էր «Մասն Մեծ Հայոց» անունով:
5) Նախարարական տների կրտսեր իշխանները կոչվում էին ոստիկաններ:
6) Հայաստանի պարսկա-բյուզանդական բաժանումից հետո Այրարատ նահանգի մեծ մասից կազմված վարչական միավորը կոչվեց «Ներքսագոյն Հայք»:
7) Հերթ ոստիկանի «աշխարհագրով» մտցված՝ ըստ գերդաստանների՝ երդերի, ոչ մահմեդականներից գանձվող հարկը ծխահարկն էր:

59 Թվարկվածներից որո՞նք են բնորոշ նէպին.

1) դրամական աշխատավարձի կիրառումից հրաժարումը
2) ազատ առևտրի վերականգնումը
3) քաղաքի և գյուղի միջև ապրանքադրամական հարաբերությունների աշխուժացումը
4) պարենհարկի փոխարեն պարենմասնատրման կրառումը
5) հարկի չափի որոշվելըմինչև ցանքսը և տարվա ընթացքում այն երկու անգամ փոփոխելը
6) գյուղատնտեսական մթերքների բռնագրավումների ժամանակավոր դադարեցումը
7) մանր և միջին բոլոր ձեռնարկությունների պետականացումը
8) հացահատիկի և այլ մթերքների բռնագրավումների արգելումը

60 Ստորև թվարկված պատմական իրադարձությունների հետևանքներից որո՞նք են ճիշտ.

1) Արտաշես I-ի հողայի բարեփոխման արդյունքում սահմանազատվեցին համայնքային և մասնավոր սեփականատերերի հողերը:
2) Արտաշես I-ի ռազմական բարեփոխման արդյունքում երկիրը բաժանվեց 120 գավառների (ստրատեգիաների):
3) Արտաշես I-ի արշավանքների արդյունքում երկրի կենտրոնական տարածքները միավորվեցին մեկ միասնական պետության մեջ:
4) Արտաշես I-ի կրոնական բարեփոխման արդյունքում երկիրը վերածվեց թեոկրատական պետության՝ աստվածապետության:
5) Արտաշես I-ի ռազմական բարեփոխման հետևանքով զորքը բաժանվեց 4 մասի՝զորավարությունների:
6) Արտաշես I-ի հողային բարեփոխումը նպաստեց ավատական հողատիրության զարգացմանը Հայաստանում:
7) Արտաշես I-ի արշավանքների արդյունքում Մեծ Հայքի բոլոր տարածքները միավորվեցին մեկ միասնական պետության մեջ՝ բացի Ծոփքից:

61 Ընտրել Բագրատունյաց թագավորության թուլացման պատճառները.

1) Երկրի խոշոր իշխանների կենտրոնախույս ձգտումները
2) մոնղոլական արշավանքները Հայաստան
3) Արաբական խալիֆայության հզորացումը
4) Անիի թագավորության բաժանումը երկու մասի
5) Հայաստանի նկատմամբ Բյուզանդական կայսրության վարած քաղաքականությունը
6) երկրի տնտեսական կյանքի անկայուն վիճակը
7) քաղաքային կյանքի անկումը Բագրատունյաց Հայաստանում

62 Գտնել ճիշտ պնդումները.

1) Համադաշնությունների համակարգը բնորոշ էր Հայկական լեռնաշխարհին՝ սկսած Ք. ա. IV հազարամյակից:
2) Վանի թագավորությունն առաջին համահայկական թագավորությունն է:
3) Ռուսա I-ի և Արգիշտի II-ի կառավարման շրջանում Վանի թագավորության համար հյուսիսից հայտնվել էր լուրջ թշնամի՝ սկյութների ցեղը:
4) Ք. ա. VI դարի առաջին կեսին Հայկական լեռնաշխարհի հարավ-արևմուտքում վերականգնված Հայկազունների իշխանությունը համապատասխանում է սեպագիր աղբյուրների Արմե-Շուբրիա պետական կազմավորմանը:
5) Ըստ Պատմահոր հաղորդման՝ Պարույր նահապետը միավորել էր Վանա լճից մինչև Եփրատ ընկած ողջ տարածքը:
6) Ք. ա. 643 թ. Վանն արդեն Պարույր նահապետի իշխանության տակ էր:
7) Տիգրան I Երվանդյանից հետո գահակալել է նրա որդի Վահագնը:

63 Տրված փաստարկներից որո՞նք են ճիշտ.

1) Արցախի ազատագրական ուժերը 1722 թ. Գանձակի մահմեդականների հետ կնքել էին թուրքական բանակի դեմ համատեղ պայքարի պայմանագիր:
2) Թուրքմենչայի հաշտության պայմանագրի կնքումից հետո ստեղծվել է Հայկական մարզը:
3) Սան Ստեֆանոյի պայմանագրի 16-րդ հոդվածով Բարձր դուռը պարտավորվել է Արևմտյան Հայաստանում անհապաղ բարեփոխումներ անցկացնել և ապահովել հայերի անվտանգությունը քրդերից ու չերքեզներից:
4) Բեռլինի վեհաժողովի նախօրյակին՝ մայիսի 25-ին կնքված համաձայնագրով Ֆրանսիան Թուրքիայից ստացել է Կիպրոս կղզին՝ փոխարենը խոստանալով պաշտպանել թուրքական պահանջները:
5) 1878 թ. հունիսի 1-ին Բեռլինում սկսված վեհաժողովն ընթացել է Մեծ Բրիտանիայի մշակած սցենարով:
6) Ըստ 1878 թ. Բեռլինի հաշտության պայմանագրի՝ Ռուսաստանի և Թուրքիայի միջև կատարվել է գրավված տարածքների փոխանակում:
7) 1914 թ. հունվարի 26-ի ռուս-թուրքական համաձայնագրով Արևմտյան Հայաստանում ստեղծվել է միացյալ ինքնավար հայկական տարածք:

64 Ընտրել այն կետերը, որոնք չեն համապատասխանում Աշտիշատի ժողովի ընդունած որոշումներին.

1) կառուցել վանքեր, դպրոցներ, հիվանդանոցներ, աղքատանոցներ, իջևանատներ
2) ընդունել Քաղքեդոնի երկաբնակության դավանանքը
3) գթասիրտ լինել ծառաների նկատմամբ
4) անվավեր ճանաչել նախորդ եկեղեցական ժողովի որոշումները
5) հավատարիմ մնալ տերերին
6) արգելել բազմակնությունը և մահացածների վրա անվայելուչ լացը
7) ծառաներին հարկերից ազատել և նրանց բնակարաններ հատկացնել

65 Գտնել այն երկու իրադարձությունները, որոնք խախտում են ստորև տրված շարքի ժամանակագրական հաջորդականությունը.

1) Հովհաննես Ադամյանի կողմից եռագույն հեռուստատեսության և լուսահեռագրության սարքի ստեղծումն ու ցուցադրումը
2) խորհրդային իշխանությունների հատուկ որոշումով Հայոց եղեռնի օրը՝ ապրիլի 24-ը, Հայ եկեղեցու կողմից նշելն արգելելը
3) մշակութային-պատմական ինստիտուտի հիմնումը Էջմիածնում
4) Ամո Խարազյանի ղեկավարությամբ պետական շրջիկ թատրոնի կազմակերպումը
5) նէպից հրաժարվելու հայտարարումը խորհրդային երկրում
6) Հայաստանի ճարտարապետների միության ստեղծումը
7) Հայաստանում լեռնահրաձգային 76-րդ դիվիզիայի կազմավորումը
8) Թիֆլիսում Աղասի Խանջյանի սպանությունը
9) 409-րդ հրաձգային դիվիզիայի կազմացրումը

66 Իրադարձությունները դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ.

1) կիմերների առաջին թշնամական արշավանքը Վանի տերության դեմ
2) Խուկանայի և խեթերի թագավորի միջև պայմանագրի կնքումը
3) Վանի աշխարհակալության ստեղծումը
4) Սարդուրի III-ի հիշատակվելն ասորեստանյան արձանագրություններում
5) Նաիրի երկրանվան առաջին հիշատակումը Սալմանասար I-ի կողմից
6) Վանի թագավորության առաջին բախումը Սարգոն II-ի հետ

67 Իրադարձությունները դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ.

1) Դավիթ բեկի առաջին հաղթական մարտը ջևանշիր կոչվող ցեղի դեմ
2) Կ. Պոլսում ռուս-թուրքական պայմանագրի կնքումը
3) Իսրայել Օրու «Պֆալցյան ծրագրի» կազմումը
4) թուրքական զորքերի ներխուժումը Արցախի Վարանդա գավառ
5) Երևան քաղաքի անձնատուր լինելը թուրքերին
6) Պետրոս I-ի Կասպիական արշավանքի սկիզբը

68 Կատարել համապատասխանեցում.
Ո՞ր վայրերից են սկզբնավորվում Հայկական լեռնաշխարհի նշանավոր գետերը.

ա. Ճորոխ	1) Բյուրակնյան լեռներից
բ. Արևելյան Եփրատ	2) Ծովք լճից
գ. Արևելյան Տիգրիս	3) Ծաղկավետ լեռներից
դ. Արևմտյան Եփրատ	4) Հայկական Տավրոսից
ե. Արևմտյան Տիգրիս	5) Խաչափայտի լեռներից
զ. Արաքս	6) Ծաղկանց լեռներից
	7) Գուգարքի լեռներից

ա	
բ	
գ	
դ	
ե	
զ	

69 Հայոց արքաների անունները համապատասխանեցնել նրանց հետ կապված իրադարձություններին.

ա. Դվին մայրաքաղաքի կառուցումը	1) Վռամշապուհ	ա	
բ. Ձիրավի ճակատամարտը	2) Արշակ II	բ	
գ. հայոց այբուբենի ստեղծումը	3) Տիրան	գ	
դ. Աշտիշատի ժողովի գումարումը	4) Խոսրով III Կոդակ	դ	
ե. Հուսիկ հայրապետի նահատակությունը	5) Պապ	ե	
զ. քրիստոնեության հռչակումը պետական կրոն	6) Տրդատ II	զ	
	7) Տրդատ Մեծ		

70 Տրված 6 պնդումներից յուրաքանչյուրի համար ընտրել՝ «Ճիշտ է», «Սխալ է», «Չգիտեմ» պատասխաններից որևէ մեկը:

1) ՀՀ տարածքը 1920 թ. գարնան վերջին հասել էր շուրջ 70 հազար քառ. կմ:
2) Հայաստանի առաջին հանրապետության խորհրդարանի ընտրություններին մասնակցելու իրավունք ունեին 20 տարին լրացած ՀՀ քաղաքացիները՝ առանց սեռի, ազգության և կրոնական խտրականության, ընդհանուր, գաղտնի, հավասար և բազմաստիճան քվեարկությամբ:
3) Հայաստանի առաջին հանրապետության ընտրովի խորհրդարանն ուներ 72 անդամ:
4) Հայաստանի առաջին հանրապետությունում դպրոցական համակարգը երկաստիճան էր՝ տարրական և միջնակարգ ։
5) 1918 թ. սեպտեմբերին ընդունվեց «Դպրոցի բարեփոխման մասին» օրենքը:
6) Հայաստանի առաջին հանրապետության պետական դպրոցներում ուսումնական գործն ազգայնացված էր: